
**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ
ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔՅԱՆԻ ԸՄԲՈՆՄԱՄԲ**

ԱԲԱԶՅԱՆ Ա. Հ.

Արարատ Ղարիբյանը XX դ. հայ լեզվաբանական մտքի կենտրոնական դեմքերից մեկն է: Լայն է նրա գիտական ուսումնասիրությունների շրջանակը՝ հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա և այլն: Աշակերտել է Հր. Աճառյանին և Ն. Մառին:

Գրաբարի հոլովներին Ա. Ղարիբյանը անդրադարձել է իր առաջին աշխատություններից մեկում՝ «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածության» մեջ (1937): Իր գիտական գործունեության սկզբնական շրջանում՝ մինչև 1950 թ. համամիութենական լեզվաբանական հայտնի բանավեճը և Ի. Ստալինի կողմից այդ բանավեճի արդյունքների ամփոփումը, նա իր ուսուցիչ Մառի հոչակած լեզվի նոր ուսմունքի կրքոտ հետևորդն էր ու պաշտպանը: Այդ գիրքն էլ նվիրել է Ն. Մառի հիշատակին՝ առաջին էջում գրելով. «Լեզվի նոր ուսմունքի հեղինակ, նոր հայագիտության հիմնադիր, բոլշևիկ լեզվաբան ակադեմիկ Ն. Մառի հիշատակին նվիրում եմ այս աշխատությունը»: Ինքնին հասկանալի է՝ այդ աշխատանքը պետք է որ գրված լիներ և իսկապես էլ գրվել է «լեզվի նոր ուսմունքի» գաղափարաբանական սկզբունքների անշեղ հետևողությամբ: Դա մասնավորապես արտահայտվել է լեզվի հասարակական բնույթի, դասակարգայնության, գրաբարի և բարբառների փոխհարաբերության, լեզվի զարգացման ու գործառույթների և նման այլ հարակից հարցերի քննության մեջ:

Սակայն այս տեսական-գաղափարաբանական կողմնորոշումը չի խանգարել հեղինակին՝ անկողմնակալ հայացքով, իրատեսորեն հետազոտելու հայոց լեզվի պատմության իրական փաստերը, տալու մեր լեզվի տարբեր փուլերի և տարածական տարբերակների համակարգային այլևայլ օրինաչափությունների՝ ուշադրության արժանի բնութագրումներ: Այս տեսակետից, անկասկած, գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գրաբարի հոլովական համակարգի նրա ըմբռնումը, որ շատ կողմերով, ինչպես կոտեսները, զգալիորեն տարբերվում է ավանդական ըմբռնումից:

Ա. Ղարիբյանը գրաբարի հոլովները չի քննում ձևի և իմաստի միասնության սկզբունքով, խոսում է ձևակազմության մասին, իսկ արտահայտության կամ թեկուզ և կիրառության մասին բնավ չի խոսում: Նշում է, որ գրաբարում կա 6 հոլով, իսկ ինչո՞ւ հատկապես 6 և ոչ թե 5 կամ 7 կամ ավելի, այդ մասին ոչինչ չի ասում: Հայտնի չէ, թե ինչ սկզբունքով է տարբերակում հոլովները: Նա գրում է. «Գրաբարն ունի 6 հոլով՝ *ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական*: Յուրաքանչյուր հոլովին հատուկ է մի առանձին մասնիկ կամ վերջավորություն, որ մենք կոչում ենք *հոլովակազմիչ*: Հոլովակազմիչները ըստ հոլովների հետևյալներն են.

Եզակի	հոգնակի
Ուղղական -	«ք», «իկ» (միայն մարդիկ և շանթիկ)
Սեռական «ն» կամ «ջ» կամ «նջ»	«ց»
Տրական նույնը	«ց»
Հայցական չկա	«ս»
Բացառական «է»	«ց»
Գործիական «լ», «վ», «բ»	«ւք», «վք», «բք» ¹ :

Սկզբից նեթ հարկ է նշել, որ և՛ հոլովների մասին հայտնված դրույթը, և՛ հոլովակազմիչների ցանկը տարակուսանք են հարուցում: Նա հստակ ասում է, որ «յուրաքանչյուր հոլովին հատուկ է մի մասնիկ կամ վերջավորություն»: Ուրեմն ամեն մի հոլով ունի իր «*հոլովակազմիչը*»: Եզակի ուղղականի դիմաց դրված է գիծ, այսինքն՝ թափուր է, չունի: Հայցականի դիմաց դրված է չկա: Տրականի դիմաց դրված է «նույնը», այսինքն՝ նույն սեռականի «ն», «ջ», «նջ» հոլովակազմիչները: Հոգնակի սեռականը, տրականը և բացառականը ունեն միևնույն *ց* մասնիկը:

Դժվար չէ նկատել, որ «յուրաքանչյուր հոլովին մի առանձին մասնիկ» ունենալու վերաբերյալ դրույթը սխալ է. 2 հոլով առհասարակ ոչ մի մասնիկ չունեն (եզակի ուղղականն ու հայցականը), իսկ եզակի սեռականի ու տրականի և հոգնակի սեռականի, տրականի ու բացառականի մասնիկները նույնական են:

Այժմ գանք բուն վերջավորություններին: Եզակի սեռականին (և տրականին) հատուկ են 3 *հոլովակազմիչներ*՝ «ն», «ջ», «նջ»: Նախ՝ ի՞նչ բան է, ըստ հեղինակի, հոլովակազմիչը: Այս հարցի պատասխանը տրված է շատ պարզ ու մեկին: «Յուրաքանչյուր հոլովին հատուկ առանձին մասնիկը կամ վերջավորությունը մենք կոչում ենք հոլովակազմիչ», - գրում է նա: Ուրեմն հոլովակազմիչը հոլով կազմող կամ կերտող մասնիկն է՝ հոլովակերտ վերջավորությունը կամ թեքույթը, ներառյալ հերթագայությունը կամ ձայնդարձը:

Հիմա տեսնենք, թե այդ երեք հոլովակազմիչներով ո՞ր բառերն են հոլովվում և ինչպե՞ս են հոլովվում: Նկատի չունենք եզակի և հոգնակի գործիականները և հոգնակի հայցականը, որոնք ունեն կայուն վերջավորություններ՝ *լ, վ, բ, վք, բք* և *ւ*: Սրանց դեմ առարկություն չունենք:

«Սեռականում «ն» հոլովակազմիչ ունեն հետևյալ բառերը, - գրում է նա, - այր (առն), աղջիկ (աղջկան), մարդիկ (մարդկան), մանուկ (մանկան), գարուն (գարնան), տեսիլ (տեսլեան), հանգիստ (հանգստեան), գալուստ (գալստեան), ժողովուրդ (ժողովրդեան), ծնունդ (ծննդեան), վաղիւ (վաղուեան):

¹ Ղարիբյան Ար., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Ե., 1937, էջ 105:

Սեռականում «ջ» հոլովակազմիչ ունեն հետևյալ բառերը՝ կին (կնոջ), գիւղ (գեղջ), և «ո» հոլովման պատկանող մի շարք բառերի երկրորդական գործածությունը (տեղի – տեղուջ, գինի – գինուջ, այգի – այգուջ, տարի – տարուջ, բարի – բարուջ, մի – միոջ և այլն:

Սեռականում «նջ» հոլովակազմիչ ունի միայն տիւ (տունջեան) բառը: Մյուս բոլոր բառերը սեռականում կորցրել են իրենց սեռականի հոլովակազմիչը²:

Սրանից հետևում է, որ հին հայերենում «ջ» հոլովակազմիչ ունեն միայն 2 բառ՝ *կին (կնոջ)* և *գիւղ (գեղջ)* բառերը՝ չհաշված «ո» հոլովմամբ բառերի երկրորդական ձևերը (*տեղի – տեղուջ, գինի – գինուջ*), որոնք, ինչպես հայտնի է, կիրառվում են առավելապես *ի* նախորդով՝ ներգոյականի իմաստը արտահայտելու համար, ինչպես՝ տարի – *ի տարուջ*, այգի – *այգուջ*, տեղի – *ի տեղուջ* և այլն: Նջ հոլովակազմիչ ունի միայն *մեկ տիւ* (տունջեան) բառը:

Ուրեմն, երկրորդական ձևերը չհաշված՝ *ջ* և *նջ* հոլովակազմիչ ունեն միայն երեք բառ (կին, գիւղ և տիւ), *ն* հոլովակազմիչ ունեն *այր, աղջիկ, մարդիկ, մանուկ, գարուն* և *իլ, իստ, ուստ, ուրդ, ունդ, իվ* ածանցներով բաղադրված բառերը (տեսիլ – տեսլեան, հանգիստ – հանգստեան, գալուստ – գալստեան, ժողովուրդ – ժողովրդեան, ծնունդ – ծննդեան և վաղիւ – վաղուեան): Ապա ո՞ր մնացին մյուս բառերը՝ տասնյակ հազարավոր գոյական, ածական, թվական պարզ-արմատական, այլևայլ ոչ նշված ածանցներով բաղադրված, ինչպես նաև բարդ բառերը: Դրանց սեռական-տրականը ինչպե՞ս է կազմվում, ի՞նչ հոլովակազմիչով: Հեղինակը այս հարցի պատասխանը արդեն տվել է վերի ձևակերպմամբ. «*Մյուս բոլոր բառերը* (իմա՝ հենց նոր մեր նշած – Ա. Ա.) *սեռականում կորցրել են իրենց սեռականի հոլովակազմիչը*»³:

Ապա, ըստ վերը նշված հոլովակազմիչների, բացատրում է եզակի բացառականի, գործիականի, հոգնակի ուղղականի, հայցականի, սեռական-տրականի, բացառականի և գործիականի կազմությունները: Հոգնակի ուղղականին հատկացնում է *ք*, երկրորդաբար՝ *իկ, եան, եար* և *տի* վերջավորությունները⁴: Մոռացության են տրված հոգնակի ուղղականի *ան* (ձիան, իշան, նաև իշեան), *անի* (ազատանի, ավագանի, նամականի), *նեար* (բարձկնեար, նավկնեար), *որեաց* (արտորեաց, վանորեաց), *ոտի* [ոսկրոտի, փորոտի(ք)] վերջավորությունները: Սակայն սխալ կլինի կարծել, թե հեղինակը չի հոլովում կամ չհոլովվող է համարում «սեռականի հոլովակազմիչը կորցրած» մյուս բոլոր բառերը: Անշուշտ, հոլովում է և տալիս է բոլոր հոլովումների հարացույցները:

«Գրաբարի հոլովման մեջ զգալի է *թեքականությունը*, և շատ ավելի, քան կցականությունը,- գրում է Ղարիբյանը: Գրաբարի թեքման նշանն է *մի ձայնավոր* (պարզ հոլովում) կամ *2 ձայնավոր* (խառը հոլովում), որ, բացի հայցականից, միատեսակ կերպով պահպանվում է բոլոր թեք հոլովաձևերում: Թեքման նշան

² Նույն տեղում, էջ 105-106:

³ Նույն տեղում, էջ 106: Ընդգծումը մերն է:

⁴ Նույն տեղում, էջ 106:

կարող է լինել հետևյալ ձայնավորներից որևէ մեկը՝ «ա», «ե», «ի», «ո», «ու» (վերջինս թեև երկբարբառ է, բայց բացատրությունը չբարդացնելու համար մենք այդ ևս կոչում ենք ձայնավոր): Հետևաբար գրաբարն էլ ունի 5 պարզ հոլովում, որ կրում են «ա», «ե», «ի», «ո» և «ու» հոլովիչների անունները:

Գրաբարի հոլովումը լինում է *ներքին* թեքման, որի ժամանակ հոլովիչն ընկնում է բառի արմատի մեջ, և *արտաքին* թեքման, որի ժամանակ հոլովիչն ընկնում է արմատից դուրս⁵:

Այս ձևակերպման մեջ ևս կան անհասկանալի ու հակասական դատողություններ.

Ա. Ինչպե՞ս պետք է հասկանալ ներքին թեքումը, «որի ժամանակ հոլովիչն ընկնում է բառի արմատի մեջ»: Օրինակ՝ *այր* բառի սեռական-տրականն է՝ *առն*: Ո՞րն է այստեղ արմատի մեջ մուծված («ընկած») հոլովիչը: Միգուցե հոլովիչի դեր է կատարում հենց արմատական *ա* ձայնավորը, ինչպես ներկայացնում է իրողությունը Ա. Աբրահամյանը⁶:

Այս տեսակետին համաձայն է նաև Ա. Ղարիբյանը, բայց միայն *հայր*, *մայր* և *եղբայր* բառերի վերաբերյալ: Սրանց մասին ճիշտ կերպով նկատում է. «...հոլովման ընթացքում արմատական *ա* -ն նույնանում է հոլովիչի հետ»⁷: Ճիշտ է այս ձևակերպումը և ոչ թե նախորդը:

Բ. Մուկն - մկան, հայր - հաւր (հօր), Տիրան - Տիրանայ, տարր - տարեր, քույր - քեռ, նետ - նետի, դեղ - դեղոյ, աւր - աւուր, ծանր - ծանու և այլ ձևերում ո՞րն է *հոլովակազմիչը*, և ո՞րն է *հոլովիչը*. բնավ հստակ չէ: Հեղինակը հստակ չի տարբերակում հոլովիչն ու հոլովակազմիչը: Եթե սեռական-տրականի հոլովակազմիչներն են «ն» -ն, «ջ» -ն, ապա նշված ձևերից ոչ մեկում նման հոլովակազմիչներից ոչ մեկի հետքն անգամ չկա: Կրկի՞ն հավատանք հեղինակին, թե «մյուս բոլոր բառերը սեռականում կորցրել են իրենց սեռականի հոլովակազմիչը»: Ինչպես երևում է, չեն կորցրել:

Գ. Լեզվաբանը մի դեպքում հոլովները տարբերակում է *հոլովակազմիչներով* (գիւղ - գեղջ, տեղի - տեղուջ, աղջիկ - աղջկան, մանուկ - մանկան, տիւ - տունջեան), մյուս դեպքում՝ *հոլովիչներով*, ինչպես Բ կետում նշված ձևերում (մուկն - մկան, հայր - հաւր, Տիրան - Տիրանայ և այլն): Խախտված է սկզբունքը. չկա միասնական հայեցակարգ:

Պարզ կամ ձայնավոր հոլովումներին Ա. Ղարիբյանը հակադրում է *խառն* կոչված հոլովումները, որոնք, ըստ նրա, չորսն են՝ ա) *Բ - Ա* (իր - եզակի, սեռական *իրի*, հոգնակի *իրաց*, անձն - *անձին* և *անձանց*), բ) *Ո - Ա* (գինի - եգ. սեռ. *գինույ*, հոգն. *գինեաց*), գ) *Ե - Բ* (գիւղ - եգ., սեռ. *գեղջ*, հոգն. *գիւղից*), դ) *ՈԲ - Ա* (բարձր - եգ. սեռ. *բարձու*, հոգն. *բարձանց*, երեց - *երիցու*, հոգն. *երիցանց*)⁸: *Ե - Բ* հոլովման

⁵ Նույն տեղում, էջ 107-108:

⁶ Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, էջ 53:

⁷ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 108-109:

⁸ Նույն տեղում, էջ 113-115:

տակ հեղինակը դրել է միայն մեկ բառ՝ *զիւղ* գոյականը, *ՈՒ - Մ* հոլովման՝ 2 բառ՝ *բարձր* և *երէց*:

Նշելի է, որ հեղինակը անկանոն կամ զարտուղի հոլովում չի ընդունում: Ավանդական քերականագիտության մեջ զարտուղի հոլովմանը բառերը նա տեղաբաշխում է ներքին կամ արտաքին հոլովումների տակ: Նույնիսկ հոլովման առանձին տեսակ է ընդունում *մեկ՝ զիւղ* բառը հոլովելու համար (*Ե - Ի* հոլովում): Եվ սա փորձում է հիմնավորել տեսականորեն: «*Գրաբարը*, - ասում է նա, - *զարմանալի օրինաչափություններ ունեցող լեզու է, բացառություններ չունի և աստիճանաբար կցականությունը կորցնելով* (հոլովակազմիչների կորուստ եզակի սեռականում, տրականում, հայցականում, երբեմն և բացառականում ու գործիականում) ապրում է անցումն դեպի մաքուր թեքականությունը»⁹:

Ածական և թվական անունների հոլովման մասին հեղինակը նոր բան չի հավելում ավանդական քերականագիտության մեջ հայտնի տեսությանը: Ինչ վերաբերում է դերանունների հոլովմանը, այստեղ նա հանդես է բերում ավանդականից տարբեր մոտեցում. ընդունում է դերանունների երեք կարգի հոլովում: Ինչպես ինքն է ասում. «Ձևաբանորեն մոտենալով՝ դերանունների հոլովումը 3 տիպի է լինում. մեկը բոլորովին նման է գոյականին, մյուսը զգալի տարբերություն ունի գոյականից, երրորդը շատ քիչ նմանություն ունի գոյականի հետ»¹⁰:

Ըստ հեղինակի՝ գոյականի հոլովման տիպն ունեն *միմեանց, իրերաց, ինքն* (ինքեանք) դերանունները: Գոյականական հոլովումից զգալիորեն տարբերվող II տիպը կազմում են այն դերանունները, որոնք սեռականում հաճախ ունենում են «*ր* (*որ, յր*)» մասնիկ, իսկ տրականում՝ միշտ *մ* կամ *ում* մասնիկ»¹¹: Դրանք հարցական *ո՞ւ, ո՞վ, ո՞ք, զի՞նչ, ի՞նչ*, ցուցական *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն*, անորոշ *ոմն, ոք*, ստացական *իմ, քո, իւր, մեր, ձեր* դերանուններն են:

Դերանունների հոլովման III տիպը, որը «շատ քիչ նմանություն ունի գոյականների հոլովման հետ», անձնական I և II դեմքերի դերանուններն են¹²: Եռանդամ այս հակադրությունից հեղինակը բխեցնում է երկանդամ նորմի հակադրություն, որտեղ գոյականների պես հոլովվող դերանունները մտցնում է *Ա* տիպի մեջ, իսկ մյուս 2 տիպերը՝ *Բ* տիպի մեջ: *Ա* տիպի վերլուծության մեջ չի խորանում հեղինակը, քանի որ դա «առանձին հետաքրքրություն չի ներկայացնում» նրա համար: *Բ* տիպը քննում է մանրակրկիտ կերպով: Ըստ նրա՝ այստեղ «ակներև է հոլովման կցական սիստեմը: «*Սա*» բառի հոլովումից երևում է, որ բառի արմատն է «*ս*», իսկ կցվող մասնիկներն էլ՝ *ա, որա, մա, մանէ, ովաւ*: *Ա* ձայնավորը մի կրկնվող պարզ վանկակազմիչ է, որ գոյություն ունի բոլոր ձևերի մեջ, նաև հոգնակիում (սոքա, սոցա, սոցանէ, սոքաք)»¹³:

⁹ Նույն տեղում, էջ 115:

¹⁰ Նույն տեղում, էջ 119:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 121:

¹³ Նույն տեղում, էջ 122:

Ինչ վերաբերում է բացառական հոլովի *անէ* գործիական հոլովի *աւ*, *աւք* վերջավորություններին, դրանք, հեղինակի կարծիքով, գոյացել են «գոյականական հոլովման պարզ անալոգիայով»¹⁴: «Նոր և անհասկանալի» երևույթ են, ըստ Ա. Ղարիբյանի, սեռականի *որ* (ս – *որ* – ա), տրականի *ւ* (ս – *ւ* – ա) և գործիականի *ու* (ս – *ու* – ա) մասնիկները: Եվ նա փորձում է բացատրել այդ անհասկանալի երևույթը: Դրա համար նախ ներկայացնում է *այս* և *սոյն* դերանունների հոլովական հարացույցները: Ա. Ղարիբյանի վերլուծությունները ավելի առարկայական ներկայացնելու նպատակով տալիս ենք այդ հարացույցները.

Եզակի				
Ուղղական	այս			սոյն
Սեռական	այսք	կամ	այսորիկ	սորին
Տրական	այսմ	կամ	այսմիկ	սմին
Հայցական	զայս			զ սոյն
Բացառական	յայսմանէ			–
Գործիական	այսու	կամ	այսուիկ	սովին կամ սովիմբ:

Հեղինակի տեսակետով՝ այստեղ սեռականի *ք* – ն (այսք) նախապես եղել է *որ*, որ առկա է այս*որ*իկ ձևի մեջ: *Ո* – ն սղվել է: Նույնն է կատարվել և տրականում (*ւ*), ինչ որ *սորին* բառի մեջ, գործիականում, *ու*, փոխանակ՝ *ու*, «այսինքն շրթնատամնային բաղաձայն «վ» – ն փոխարինված է շրթնային կիսաձայն *ւ*-ով, որ տեղի է ունենում միշտ, երբ *վ*՝ բաղաձայնին նախորդում է «ե» կամ «ի» կամ «ա» ձայնավորը (օրինակ՝ բանի, ինեւ, Տիրանա): (...) «*Այս*» բառի զանազան հոլովների «իկ» մասնիկը և *սոյն* բառի «յն» // «ին» մասնիկը հոլովման հետ կապ չունեցող անտարբեր ածանց է»¹⁵:

Նկատի ունենալով նաև ստացական դերանվան եզակի դեմքի *իմոյ* և տրականի *իմում* ձևերը, *ոմն* և *ո՛* դերանունների սեռականի և տրականի ձևերը (սեռ. ուրումն, ոյր, տր. ումեմն, ում)՝ հեղինակը ընդհանրացնում է. «դերանունների *II տիպի հոլովման սեռականի և տրականի* հոլովակերտ մասնիկները նույնանում են «*ո*» դերանվան նույն հոլովների ձևերի հետ»¹⁶: Եվ ապա՝ «Ճիշտ այդ եղանակով է կազմվել ռուսերենի դերանունների և ածականների հոլովումը, օրինակ.

Им.	он	что	мой	синий
Род.	его	ч – его	мо – его	син – его
Дат.	ему	ч – ему	мо – ему	син – ему
Твор.	им	–	мо – им	син – им

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 123:

¹⁶ Նույն տեղում, էջ 124:

Пред. о (н)ем ч – ем о мо – ем о син – ем¹⁷:

Նշենք, որ հայերենի դերանունների հոլովական համակարգի այս համեմատությունը ռուսերենի անձնական եզակի III դեմքի, հայցական և ստացական I դեմքի դերանունների և ածականի հոլովման հետ խիստ բնագրոսիկ է: Հաշվի չեն առնված ռուսերենի և հայերենի քերականության համակարգային օրինաչափությունները:

Ի տարբերություն հայերենի, որը կորցրել է հնդեվրոպական նախատիպի անվան կարգը, ռուսերենը պահել է այն: Հոլովման համակարգում տարբեր սեռերի բառեր, այդ թվում՝ դերանունները, ստանում են տարբեր կադապարումներ: Դրանք հայերենի հետ համեմատելի չեն, առավել ևս՝ գրաբարի:

Այս բոլոր վերլուծությունները մեկ նպատակ էին հետապնդում՝ լրացուցիչ մի փաստարկով ապացուցելու Ն. Մառի այն կանխադրույթը, թե հայերենը խառնածին լեզու է՝ խաչավորման արդյունք, ծագումով ոչ թե հնդեվրոպական, այլ հաբեթական*:

Լեզվի դասակարգայնության մասին այս տեսությունը սխալ էր և մերժվեց: Մերժվեց նաև հայերենի ծագման վերաբերյալ եղած հաբեթական ուսմունքը: Հայերենի հնդեվրոպական ծագումը վաղուց էր ապացուցված և ընդունված (Ֆ. Բոպպ, Ռաֆկ, Գրիմ, Հումբոլդտ, Պետերման, Վինդիշման, Հ. Հյուբշման)¹⁸:

Մյուս կողմից՝ ընդհանուր լեզվաբանությունից հայտնի է, որ աշխարհում խառնածին լեզուներ չեն եղել և չկան: Լեզուների խաչավորումից (շփումից) նոր լեզու չի գոյանում, այլ հաղթում է մեկը: Մյուսը կամ մյուսները ձուլվում են նրա մեջ: Էթնոսի, տոհմի, ժողովրդի՝ մի այլ էթնոսի, տոհմի, ժողովրդի մեջ ձուլվելուն համընթաց մեռնում է նաև նրանց լեզուն: Ձուլվող տոհմը կամ ժողովուրդը

¹⁷ Նույն տեղում:

* Հաբեթական անվան տակ Ն. Մառը հասկանում է կովկասյան լեզուները: Ավելի ուշ նրանց մեջ ընդգրկեց Միջերկրական ծովի շրջանի ժողովուրդների որոշ այլ լեզուներ: Հայերենը նա դիտեց որպես հաբեթականից հնդեվրոպականին անցնող միջին մի վիճակ (**Март Н., Яфетическая теория, Баку, 1928, с. 134**). Այս տեսակետը պաշտպանեց Ա. Ղարիբյանը: Ըստ նրա՝ «Շատ և շատ տոհմեր, առնվազն 200-ի սահմաններում, միանալով՝ ֆեոդալական հասարակության կազմության և այդ պրոցեսի ավարտման հիման վրա գոյացրել են հայկական էթնոսը: Այդ տոհմերի ղեկավար խմբերը դարձել են հայ էթնոսի ֆեոդալներ, տերեր, տանուտերեր (հայ տոհմական նախարարներ), իսկ ստորադաս՝ հողին կապած մասը դարձել է, լեզվաբանորեն ասած, բարբառախոս ժողովուրդ, որ դարձել է ճորտ գյուղացի» (**Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 68-69): Այսինքն՝ վերին խավը խոսում էր «բարձր» լեզվով՝ գրաբարով, ստորին խավը՝ ժողովուրդը՝ բարբառներով: Ուրեմն գրաբարը և բարբառները դասակարգային լեզուներ են: «Այդ տեղական լեզուների և գրաբարի միասնությունը, - գրում է նա, - մենք կոչում ենք **էթնիկական** լեզու, որի բաղադրիչ մասերը (գրաբար և նախաբարբառներ) հանդիսանում են դասակարգային լեզուներ» (նույն տեղում, էջ 86):

¹⁸ Այս մասին մանրամասն տե՛ս **Աբաջյան Ա.**, Հայերենը և պարսկերենը որպես հնդեվրոպական լեզուներ (Կանթեղ, 2002, N 2, էջ 64-75):

վերցնում է հաղթող տոհմի կամ ժողովրդի լեզուն: Այս է ցույց տալիս լեզվաբանության ողջ պատմությունը:

Ա. Ղարիբյանը գրում է. «Գրաբարի դերանունների հոլովման II տիպը հայերենում պահպանել է հայերենի անցած հաբեթական ստադիայի մնացորդը, այսինքն՝ դերանվանական հոլովման կցական տիպը, որով արդարանում է հանճարեղ Մառի այն կարծիքը, թե... նույնիսկ հաբեթական սիստեմից դեպի պրոմեթեիդականն անցնող լեզվական տիպի մեջ, օրինակ՝ հայերենում, նկատում ենք բացարձակ թեքականության պայմաններում նրան՝ կցականության շերտի միջոցով՝ նախորդող դերանվանական կապակցության առկայությունը...: Հետևաբար, իրավունք ունենք եզրակացնելու, որ հայերեն լեզվի սիստեմն իր արմատներով թափանցում է մինչև հաբեթական լեզուների ստադիան, որոշ մասերով էլ վերածվել է մինչև հնդեվրոպական լեզուների ստադիան»¹⁹:

Նկատելով, որ անձնական դերանունների հոլովակազմության մեջ I դեմքի հոգնակի ուղղականի և գործիականի *ք* վերջավորությունը գոյականների ուղղականի հոլովահոգնակիակազմիչն է, Ա. Ղարիբյանը եզրակացնում է. «I դեմքի անձնական դերանվան արմատն է «*ւ*» (C էլեմենտ), որ նախահայկական լեզուների մեջ նշանակում է՝ *մենք, մեր*, այսինքն՝ սեփական կոլեկտիվը: Հետագայում «*Ը*» օգտագործված է ցույց տալու համար կրավորական կառուցվածքի նախադասության ենթական, այսինքն եզակի սեռական հոլովը (եղեալ է իմ)»²⁰:

Այսպես լեզվական փաստերը վերլուծվում են «լեզվի նոր ուսմունքի» սկզբունքներին համապատասխան՝ գաղափարաբանական, լեզվի դասակարգայնության հիմնադրությից էլնելով: Ահա ևս գաղափարական, անգամ քաղաքական մի եզրակացություն, որ բխեցված է լեզվական մի վերլուծությունից, ավելի ստույգ՝ նույն անձնական դերանվան հոլովակազմության՝ իր ըմբռնումից: «Այն փաստը, - գրում է Ա. Ղարիբյանը, - որ եզակի հոլովման բոլոր հոլովաձևերը ոչինչ չունեն ուղղականի հետ (դու, քո, քեզ, քեն, քեւ) և ընդհակառակը, հոգնակի բոլոր հոլովաձևերը նույն արմատն ունեն, ինչ որ եզակի ուղղականը (դու, դուք, ձեր, ձենք, ձեւք) ցույց է տալիս, որ «*Դ*» (A էլեմենտ) ընդունված է սկզբում իբրև հոգնակի անուն՝ ո՛չ սեփական կոլեկտիվի, թշնամու, հակառակորդի կամ արտադրակից կոլեկտիվի, կամ՝ պատերազմական դաշնակցի անուն»²¹:

Ակնհայտ է, որ լեզվական փաստերը վերլուծվում են բռնազբոսիկ կերպով՝ պատմական ակունքներից կտրված: Վերլուծության տեսական հիմքը Ն. Մառի «լեզվի նոր ուսմունքն» է, մեթոդաբանությունը՝ նույնի քառասորք վերլուծությունների մեթոդը, ըստ որի աշխարհի բոլոր լեզուների բոլոր բառերն ու բոլոր ձևերը գոյացել են նախնական 4 տարրերից (էլեմենտներից), որոնք Ն. Մառը պայմանականորեն կոչում էր *Մալ, Բեր, Յոն, Ռոշ* կամ լատինական տառերով՝ *A, B, C, D*: Դրան համապատասխան՝ I դեմքի անձնական դերանվան հոգնակի թվի մ-

¹⁹ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

²⁰ Նույն տեղում, էջ 128:

²¹ Նույն տեղում, էջ 129:

ն (մենք) բխեցնում է C տարրից (C էլեմենտ, *Յոն*), որ «խորհրդանշում» է «սեփական կոլեկտիվը», որտեղ անհատը կրավորական դեմք է: Հոգնակի II Դ - ն (դուք) բխեցնում է A տարրից (A էլեմենտ, *Սալ*), որը «խորհրդանշում» է ոչ սեփական կոլեկտիվը, այլ թշնամի, հակառակորդ կամ դաշնակից, արտադրակից և այլն:

Հաբեթական տեսությունը յուրովի արտացոլվել է նրա սկզբունքների մեջ նաև գրաբարի հոլովահոգնակիակազմության հարցում: Այսպես, հայտնի է, որ դասական շրջանի հայերենը աչքի էր ընկնում անվան հոգնակի ուղղականի ձևերի բազմությամբ: Ըստ որում, թեև անառարկելիորեն հավաստված է, որ հայերենի անվան հոգնակիակերտ բոլոր վերջավորությունները հնդեվրոպական ծագում ունեն և բնավ չեն առնչվում կովկասյան լեզուների հետ²², Ա. Ղարիբյանը, հենվելով Մառի մի դրույթի վրա, փորձում է հաստատել, թե «...հոգնակիների այս առատությունը հայերենում ապացույց է, որ էթնիկական հայերենը կազմվել է բազմաթիվ լեզուներից, այդ լեզուներով խոսող «ժողովուրդների խաչավորման և խառնվելու շնորհիվ»: Հայ էթնիկական լեզվի գոյացման պրոցեսում զանազան լեզուների հոգնակիները մերվել են նրա մեջ որպես լեզվական այս կամ այն երևույթ, որ մերթ նույնն են մնացել, ինչ որ էին նախորդ լեզվի մեջ, մերթ էլ փոխել իրենց որակը՝ վերածվելով ածանցի կամ թեքական մասնիկի: Հոգնակիների խաչավորումը, կցումը, միահյուսումն ու ածանցների վերածվելը ցույց են տալիս, որ հայերենը իր ստադիալ վիճակով ապրում է հաբեթականից պրոմեթեիդական սիստեմին անցնելու շրջանը»²³:

Այս տեսակետները չէին կարող ընդունելություն գտնել հայ լեզվաբանների շրջանում և բազմիցս վիճարկվել են: Ավելին: Այդ տեսության գիտական լավագույն բնութագիրը տվել է ինքը՝ հեղինակը, 1950 թ. լեզվաբանական հայտնի բանավեճից հետո: «Սովետական Հայաստան» օրաթերթի 1952 թ. ապրիլի 5-ի համարում նա գրել է. «Իմ որդեգրած կոնցեպցիան հայերենի առաջացման մասին արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: (...) Իմ զարգացրած տեսությունը գրաբարի և բարբառների դասակարգային լեզուներ լինելու մասին՝ արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: (...) Իմ զարգացրած տեսակետը բարբառների մասին արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: (...) Իմ աշխատությունների տեսական բոլոր դրույթները ոչ մարքսիստական դրույթներ են»:

Այսպիսով, լեզվական համակարգի գիտական քննության ժամանակ Ա. Ղարիբյանը, խորահմուտ և ընդունելի բազում դիտարկումներին զուգընթաց,

²² Այս մասին տե՛ս Pedersen H., *Lur Armeniche Sprachgeschichte* (Wien, 1904), հայերեն թարգմանությունը՝ **Պեդերսեն Հ.**, Նպաստ մը հայ լեզուի պատմութեան (Վիեննա, 1904), *Armenisch und die Nachbarsprachen*, KL, XXXIX, 1904, հայերեն թարգմանությունը՝ **Պեդերսեն Հ.**, Հայերեն և դրացի լեզուները (Վիեննա, 1907), **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 174-313: Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 158, Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 113-146:

²³ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 104:

շատ դեպքերում մեղանչել է գիտական ճշմարտության դեմ, այդ թվում՝ գրաբարի հոլովների ըմբռնման հարցում:

ПАДЕЖИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА ПО АРАРАТУ ГАРИБЯНУ

АБАДЖЯН А. Г.

Резюме

Исследуя падежную систему древнеармянского языка, А. Гарибян не придерживается традиционного подхода, отмечая лишь формообразование и оставляя в стороне вопрос их употребления.

По А. Гарибяну, падежная система древнеармянского языка включает 6 падежей: именительный, родительный, дательный, винительный, аблативный и творительный. При этом он подчеркивает, что каждый падеж имеет свое окончание, называемое им падежной флексией.

А. Гарибян не признает неправильного склонения. Слова, относящиеся к этому склонению, он относит к внешнему и внутреннему склонению.

В вопросе склонения местоимений он также проявляет нетрадиционный подход. Все его исследования преследуют цель доказать правоту Н. Марра, утверждавшего, что армянский язык является не индоевропейским, а яфетинским языком.